

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԽՈՐՀՐԴԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՏԱՍՆԸ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ՆԻՍՏ*)

(24 Սեպտ. 1918)

Նախագահ՝ Ա. Սահակեան

Օրակարգի հարցերն են. 1) Գաղթականական խնամատարութեան օրինադրի վերջնական խմբագրութեան հաստատումը, 2) Դիլիջանում դանձարան բաց անելու օրինադրի վերջնական խմբագրութեան հաստատումը, 3) Քրէական դատաւարութեան մի քանի կէտերի փոփոխութեան եւ օրինադրի երրորդ ընթերցումը, 4) Դպրոցական տեսչութեան վերացման օրինադրի երրորդ ընթերցումը, 5) Օրէնքներ հրատարակելու օրինադրի երրորդ ընթերցումը, 6) Ուղելից խմիչքներէ եւ զինու վրա ակցիզ աւելացնելու օրինադրի առաջին ընթերցումը, 7) Զուլհակային աշխատանքի օրինադրի առաջին ընթերցումը, 8) Զեկուցում պետական վերհսկողութեան օրինադրի մասին, 9) Բժշկա - ատոլջապահական յանձնաժողովի ղեկուցում, 10) Ընթացիկ գործեր:

Նիստի սկզբում տեղի է ունենում քրէական դատաւարութեա մի քանի կէտերի փոփոխութեան, դպրոցական տեսչութեան վերացման եւ եւօրէնքներ պահելու ու հրատարակելու օրինադրերի երրորդ ընթերցումը: Այս օրինադրերը առանձին - առանձին կարդացւում քննարկւում եւ ընդունւում են:

Ռ. Տէր - Մինասեան (դաշն.), յանձնաժողովի կողմից կարդու է գաղթականական խնամատարութեան օրինադրի վերջին խմբագրութիւնը: Դաշնակցական Փրակցիայի կողմից առարկութիւն է լի

14րդ նիստը տեղի է ունեցել Սեպտ. 20-ին: Արձանագրութիւնը, դժբախտաբար, կարելի չեղաւ հարել, այդ պատճառով 13-րդից յետոյ տալիս ենք 15-րդ նիստի արձանագրութիւնը: ԽՄԲ.

նում օրինագծի երրորդ եւ չորրորդ յօդածները դէմ: Ֆինանսական յանձնաժողովի կողմից պատգ. Սիր. Տէր-Մարտիրոսեանը (Ժող.) յայտնում է յանձնաժողովի տեսակէտը այդ խնդրի մասին. յանձնաժողովը կարծում է, որ մենաշնորհի միջոցով հաւաքւած բամբակից 85,800 փութ պէտք է յատկացնել ջուլհականոցին եւ նոյն նպատակով կառավարութեան տրամադրութեան տակ դնել 5 միլիոն ուրբ:

Ֆինանսների նախարարը յայտարարում է, թէ ինքը հնարաւորութիւն չի ունեցել ծանօթանալ այդ գործին, բայց լսած զեկուցման հիման վրա գտնում է, որ այդ օրինագիծը պետական բիւջէի ձեւ չի կրում: Եթէ գործարանը կրելու է ինքնուրոյն հիմնարկութեան ձեւ, այն ժամանակ օրինագիծը պէտք է այլ կերպ կազմէր: Առաջարկւած ձեւը անընդունելի է:

Ս. Տիգրանեան (դաշ.), Առաջարկում է օրինագիծը յանձնել Ֆինանսական յանձնաժողովին, որպէսզի նախարարի հետ խառն նիստում քննելուց յետոյ նոր միայն խորհրդարանին ներկայացւի:

Ռ. Տէր-Մինասեան. — Յայտարարում է, թէ երբ օրինագծի դէմ առարկում են, պէտք է նոր օրինագիծ առաջարկեն: Ապա անցնելով խնդրի շտապողականութեան՝ շեշտում է, որ զաղթականութեան աշխատքի թէ աշխատք պէտք է մի որեւէ կերպ նպաստ տալ. դրամական նպաստ տալ մօտաւորապէս 20 հազար կանանց աւելի հեշտ չէ, քան նրանց համար գործ գտնելը:

Ապա աւելացնում է, որ սա արդէն օրինագծի երրորդ ընթերցումն է եւ որ ջուլհականոցին վերաբերող յօդածը օրինագծի մի մասն է կազմում միայն, ուստի եւ առարկութիւնները աւելորդ են:

Ֆինանսների նախարար. — Յայտարարում է, որ իրեն տարօրինակ է թւում եւ ոչ մի եկրում ընդունւած ձեւ չէ, որ պետական որեւէ յանձնաժողով պահանջէ 6 միլիոն ուրբի բիւջէ եւ Ֆինանսների նախարարը տեղեակ չլինի: Աւելացնում է, որ ինքը օրինագծի մասին բոլոր կողմերի չէ խօսել: Առաջարկում է կամ փոխել այդ կէտը, կամ վերաքննել:

Քւէարկութեան է դրւում հետեւեալ առաջարկը. «Վերադարձնել օրինագիծը Ֆինանսական յանձնաժողովին վերաքննելու համար»:

Բանաձեւը ընդունւում է:

Ռ. Տէր-Մինասեան. — Կարգում է օրինագիծը «Գաղթական որբերի խնամատարութեան մասին»:

Խորհուրդը գտնում է, որ օրինագիծը կազմւած է անկանոն ձեւով: Որոշում է օրինագիծը յանձնել օրէնսդրական յանձնաժողովին վերամշակելու համար:

Ս. Տէր-Մարտիրոսեան. — Զեկուցանում է ոգելից խմբի քննքի եւ

գինու ակցիզը աւելացնելու օրինագիծը: Յանձնաժողովի կողմից պաշտպանում է խնդրի շտապողականութիւնը, որովհետեւ շատերն իրենց ունեցած սպիրտն ու գինին ծախում են: (Օրինագծի շտապողականութիւնը ճանաչում է):

Այնուհետեւ պատգամաւորը յայտնում է, որ յանձնաժողովը օրինագիծը կազմելու ժամանակ կանգ է առել հետեւեալ հարցերի վերաբերյալ. Թէ ակցիզն աւելացնելու դէպքում արդեօք ա) գինեգործութիւնը չի՞ դադարի, բ) մաքսանենգութիւնը չի՞ վարզանայ, գ) արտահանութիւն չի՞ սկսւի: Այս հարցերը քննելուց յետոյ, յանձնաժողովը յանգել է այն եզրակացութեան, որ ակցիզը բարձրացնելու դէպքում գինեգործութեան ոչ մի վնաս չի կարող առաջանալ:

Ապա կարդացւում է օրինագիծը:

Ֆինանսների նախարար.- Յայտարարում է, որ սպիրտի այն քանակը, որ ժամանակի ընթացքում ցնդում է, ազատւում է տուրքից. եղած տեղեկութիւններից երեւում է, որ ցնդող սպիրտի քանակը հասնում է 70%-ի: Մեր երկրում ստացւում է տարեկան մօտ երկու եւ կէս միլիոն աստիճան սպիրտ, լայց ծախւում է մինչեւ 60% . դրա հետեւանքը լինում է այն, որ սպիրտը մնալով ցնդում է: Երկրորդ՝ գինու խնդիրն է. եթէ գինու վրա մեծ տուրք նշանակւի, գինեատէրերն այլեւս գինի չեն պատրաստի, այլ կոնեակ եւ ըսպիրտ կը պատրաստեն, որովհետեւ այդ նրանց ձեռնտու կը լինի. դրա համար գինու վրա էլ պէտք է մեծ ակցիզ դնել: Եւ, վերջապէս, երրորդ՝ գինու առեւտրի խնդիրն է, որ նոյնպէս պէտք է կոնտրոլի ենթարկել:

Հ. Ազատեան (սոց.-դէմ.) .- Աչքի առաջ ունենալով երկրի բացառիկ ֆինանսական պայմանները, ընդունում ենք այդ օրինագիծը, միայն որոշ փոփոխութիւններով: Երբ որ մենք ակցիզը աւելացնում ենք, սպիրտի կամ գինու տէրը այդ յաւելումը պէտք է ժողովրդից դուրս բերի թանգ գնով ծախելով իր սպրանքը, ուստի սոց.-դէմ. ֆրակցիայի կողմից առաջարկում եմ այդ սպրանքների վրա գին նշանակել:

Հ. Սարգսեան (դաշ.) .- Համաձայն է պատգ. Ազատեանի առաջարկին եւ շեշտում է, որ կոնեակի վրա բարձր ակցիզ դնել կարելի է, որովհետեւ հասարակութեան դէմոկրատիկ տարրը չի օգտւում կոնեակից, իսկ հարուստները թանգ գնով էլ կարող են գնել:

Ֆինանսների նախարար.- Դին նշանակելը գտնում է աննպատակալարմար. սակաւին հետեւանքով զաղտնի առեւտուր է զարգանում եւ գները շուկայում աւելի են բարձրանում:

Քւէարկութեան է դրւում օրինագիծը յօդւած առ յօդւած. բո-

լոր չորս յօդածներն էլ ընդունուած են: Ապա քննարկուած եւ նոյնպէս ընդունուած է ամբողջ օրինագիծը:

Հերթի է դրուած պետական վերահսկողութեան օրինագիծը. գեղուցանուած է պատգ. Ս. Տիգրանեանը:

Ս. Մամիկոնեան (անկուս.) - Գտնուած է, որ պետական ծախքերը քննելիս ուստական օրէնքով առաջնորդուել հնարաւոր չէ, որովհետեւ այդ օրէնքի համաձայն պետական հաշւետեսը անում էր միայն այն, ինչ որ օրէնքն էր նախատեսել. մեր երկրում, որտեղ ամէն քայլափոխին զեղծումներ են կատարուած, այդպէս անել չի կարող: Պատգամաւորը գտնուած է, որ պետական վերահսկիչը պէտք է լինի ոչ թէ մի նեղ մասնագէտ միայն, այլ լայն ժողովրդականութիւն վայելող մէկը:

Յ. Բաւրաղեան (դաշ.) - Պնդում է, որ պետական հաշւետեսի շտաբի մի մասը դրսեւ պէտք է հրաւիրել, իսկ ինքը՝ պետական հաշւետեսը պէտք է անսլաքման մասնագէտ լինի: Պաշտպանում է յանձնաժողովի առաջարկը եւ գտնում է խնդիրը խիստ շտապողական:

Ս. Տիգրանեան - Խորհրդարանը պէտք է մի ապարատ ստեղծի անմիջապէս գտնելու համար պետական զեղծումները: Առաջարկում է ընդունել օրինագծի շտապողականութիւնը եւ յանձնել յանձնաժողովին:

Ս. Մամիկոնեան - Գտնում է, որ յանձնաժողովը եկել է խնդրելու, որ իրաւունք տրւի իրեն ընտրելու պետական հաշւետեսին: Խորհրդարանը չպէտք է հրաժարւի իր իրաւունքներից. նա ինքը պէտք է ընտրէ պետութեան բոլոր հաշիւները քննող բարձր պաշտօնեային:

Ապա Փրակցիաները իրենց կողմից առաջարկներ են անում պետական հաշւետեսի ընտրութեան մասին: Ընդունուած է սոց. - դէմ. Փրակցիայի հետեւեալ առաջարկը. -

«Յանձնարարել Խորհրդի նախագահութեանը հետեւեալ նիստին ներկայացնել պետական հաշւետեսի թեկնածուների ցուցակը ընտրութիւն կատարելու համար»:

Նիստի վերջում սոցիալ-դէմոկրատները մի քանի հարցումներ են անում վարչապետին եւ ներքին գործոց նախարարին: Վերջինիս բացակայութեան պատճառով՝ նրան ուղղած հարցումները մնում են բաց:

Վարչապետ Քաջազնունի - Իրեն ուղղած հարցումներին պա-

տասխանելով յայտնում է, որ լուսաւորութեան նախարար առ այժմ
չի հրաւիրւած միայն այն պատճառով, որ զպրոցական օրէնքի մէջ
կան մի քանի մութ կէտեր, որոնք պարզաբանւած չեն. այդ հարցերի
լուծման դէպքում լուսաւորութեան նախարար իսկոյն կը հրաւիրուի:
Ապա յայտնում է, որ զպրոցներէ բացումը կախում չունի լուսաւո-
րութեան նախարարից եւ որ զպրոցները կը բացեն հոկտ. 1-ից:

Վերջում պատգ. Մուշեղեան (սոց.-յեղ.) յայտարարութիւն է
անում Թիֆլիսի պոլիտեխնիկումի մասին: Փամանակի աւելինեւրու
պատճառով այդ յայտարարութիւնն — հարցումի պատասխանը թող-
նըում է յաջորդ նիստին:

«Հարիզոն», 16 հոկտ.

